ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/29» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ(ԳՀ)
ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան — 17-ը հոկտեմբերի 2017թ.
ժամը 11[00]

**Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝**
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ թիկունքային ապահովման վարչության պետ, գնդապետ Վ. Գասպարյան,
**գնահատողներ՝**
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պարենային, դեղամիջոցներով և բժշկական սարքավորումներով ապահովման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 3-րդ դասի խորհրդական Հ. Ավետիսյան,
ՀՀ ՊՆ ռազմաբժշկական վարչության մատակարարման բաժանմունքի պետ, բ/ծ կապիտան Ն. Հարությունյան,
ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա լեյտենանտ Ս. Նիկոյան,
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի սպա, մայոր Կ. Բրուտյան,
**Գնումները համակարգող՝**
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 3-րդ դասի խորհրդական Ա. Մաղաքյանին:

**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/29» ծածկագրով հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

(Ա. Մաղաքյան)

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2.«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/29» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4.Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/29» ծածկագրով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.**

(Ա. Մաղաքյան)

**1.1** ՀՀ ՊՆ կարիքների համար «**Դեղորայքի**» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/29» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հ/հ | Մասնակիցների անվանում |
|---|---|
| 1. | «Արֆարմացիա» ՍՊԸ |
| 2. | «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ |
| 3. | «Թեոֆարմա» ՍՊԸ |
| 4. | «Նատալի Ֆարմ» ՍՊԸ |

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**2 . « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/29» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.**

(Ա. Մաղաքյան)

2.1 Մասնակցների էլեկտրոնային հայտերը **www.armeps.am** կայքի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի:
2.2 Մասնակցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 Մասնակցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/29» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ ներքոհիշյալ դեպքերի.

- «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ի կողմից 15-րդ չափաբաժնի մասով գնային առաջարկում առկա է անհամապատասխանություն՝ թվերով և տառերով արտահայտված գումարների միջև: Առաջնորդվելով ընթացակարգի հրավերի 8.1 կետով՝ հանձնաժողովը որոշեց հիմք ընդունել տառերով գրված գումարը, որը կազմում է 1,179,670 (մեկ միլիոն հարյուր յոթանասունինը հազար վեց հարյուր յոթանասուն) ՀՀ դրամ: Վերը նշված եղանակով գնահատման արդյունքում մասնակցի կողմից առաջարկված ընդհանուր գինը կազմեց 8,202,270 (ութ միլիոն երկու հարյուր երկու հազար երկու հարյուր յոթանասուն) ՀՀ դրամ: Հանձնաժողովն արձանագրեց, որ մասնակցի կողմից ներկայացված հայտի ապահովումը չի համապատասխանում ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ տուժանքի մասին համաձայնագրին կից վճարման պահանջագրով սահմանված գումարն ավելի քիչ է քան ընդհանուր գնային առաջարկի (8,202,270 ՀՀ դրամ) 5 տոկոսը: Հիմք ընդունելով նշված հանգամանքը՝ հանձնաժողովը որոշեց մերժել «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ի հայտը:

- «Նատալի ֆարմ» ՍՊԸ-ի կողմից 15-րդ չափաբաժնի մասով գնային առաջարկում առկա է անհամապատասխանություն՝ մասնավորապես լրացված ԱԱՀ-ի գումարը չի համապատասխանում ավելացված արժեքի հարկի համար ՀՀ Օրենսդրությամբ նախատեսված չափին, բացի այդ, «Արժեք» և «ԱԱՀ» դաշտերում լրացված թվերի հանրագումարը չի համապատասխանում ընդհանուր գին դաշտում լրացված թվին:

**3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին**

---

(Ա. Մաղաքյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները. ***Տես արձանագրությանը կից Հավելված 1***

3.2 Մասնակցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/, բացառությամբ «Նատալի ֆարմ» ՍՊԸ-ի կողմից 15-րդ չափաբաժնի մասով առաջարկված գնին

«Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ի կողմից 15-րդ չափաբաժնի մասով գնային առաջարկը գնահատելիս հանձնաժողովը հիմք է ընդունել տառերով արտահայտված գումարները:

3.3 Մասնակցների հետ բանակցություններ չեն վարվել:

3.4 Հանձնաժողովը որոշեց 1-ին, 3-րդ, 4-րդ, 6-րդ և 13-րդ չափաբաժինների մասով ընթացակարգը հայտարարել չկայացած «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-ին կետը՝( ոչ մի հայտ չի ներկայացվել):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

**4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/29» ծածկագրով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.**

---

(Ա. Մաղաքյան)

4.1 **25.10.2017թ.** (էլեկտրոնային գնահատման արդյունքում) «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/29» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգի 2-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 14-րդ և 15-րդ չափաբաժիններում 1-ին տեղ զբաղեցնող ճանաչվեց՝ «Արֆարմացիա» ՍՊԸ-ն, 7-րդ չափաբաժնում՝ «Թեոֆարմա» ՍՊԸ-ն, իսկ 5-րդ և 8-րդ չափաբաժիններում «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ն:

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/29» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված համապատասխան փաստաթղթերը:

4.3 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

**5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին**

---

Ա. Մաղաքյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

**6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Ա. Մաղաքյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/29» ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ եզրակացությունը և ընթացակարգի հրավերով նախատեսված համապատասխան փաստաթղթերը ստանալուց հետո հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը ժամը 11:30-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:*

| | |
|---|---|
| Գնահատող(ԳԱՊ) | Վ. Գասպարյան |
| Գնահատող | Հ. Ավետիսյան |
| Գնահատող | Ն. Հարությունյան |
| Գնահատող | Ս. Նիկոյան |
| Գնահատող | Կ. Բրուտյան |
| Գնումները համակարգող՝ | Ա. Մաղաքյան |

25.10.2017թ.

Հավելված 1

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/29» ծածկագրով ընթացակարգի գների ամփոփում

| Հ/հ | Գնման առարկա | Չ/Մ | Քանակ | Ընդհանուր գին /նախահաշվային/ | «Արֆարմացիա» ՍՊԸ | | | «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ | | | «Թեոֆարմա» ՍՊԸ | | | «Նատալի Ֆարմ» ՍՊԸ | | | 1-ին տեղ(հաղթող) զբաղեցնող մասնակից |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Առանց ԱԱՀ | ԱԱՀ | ԱԱՀ-ով | Առանց ԱԱՀ | ԱԱՀ | ԱԱՀ-ով | Առանց ԱԱՀ | ԱԱՀ | ԱԱՀ-ով | Առանց ԱԱՀ | ԱԱՀ | ԱԱՀ-ով | |
| 1 | Քսիլոմետազոլին r01aa07, r01ab06, s01ga03 /Քսիլոմետազոլին (քսիլոմետազոլինի հիդրոքլորիդ)/ | սրվակ | 5240 | 2,871,520.00 | | | | | | | | | | | | | Առաջարկի բացակայություն |
| 2 | Դիֆենհիդրամին d04aa32, d04aa32 /Դիֆենհիդրամին (դիֆենհիդրամինի հիդրոքլորիդ), diphenhydramine (diphenhydramine hydrochloride)/ | սրվակ | 50000 | 1,175,000.00 | 904,166.67 | 180,833.33 | 1,085,000.00 | | | | | | | | | | «Արֆարմացիա» ՍՊԸ |
| 3 | Ֆոսֆոլիպիդներ (էսենցիալ)-ԷՖ A05C /էսենցիալ ֆոսֆոլիպիդներ,essential phospholipids/ | սրվակ | 6000 | 4,867,800.00 | | | | | | | | | | | | | Առաջարկի բացակայություն |
| 4 | Իբուպրոֆեն c01eb16, g02cc01, m01ae01, m02aa13 /Իբուպրոֆեն, ibuprofen/ | դեղահատ | 52500 | 315,000.00 | | | | | | | | | | | | | Առաջարկի բացակայություն |
| 5 | Սուքսամեթոնիում m03ab01 /Սուքսամեթոնիում(սուքսամեթոնիումի յոդիդ), suxamethonium (suxamethonium iodide) | սրվակ | 3200 | 1,056,000.00 | | | | | | | | | | 493,333.33 | 98,666.67 | 592,000.00 | «Նատալի Ֆարմ» ՍՊԸ |
| 6 | Մեթիլպրեդնիզոլոն d07aa01, d10aa02, h02ab04 /Մեթիլպրեդնիզոլոն (մեթիլպրեդնիզոլոն նատրիումի սուկցինատ)methylprednisolone (methylprednisolone sodium succinate)/ | սրվակ | 350 | 2,940,000.00 | | | | | | | | | | | | | Առաջարկի բացակայություն |
| 7 | Իզոֆլուրան n01ab06 /Իզոֆլուրան isoflurane/ | սրվակ | 268 | 3,655,552.16 | | | | | | | 2,345,000.00 | 469,000.00 | 2,814,000.00 | | | | «Թեոֆարմա» ՍՊԸ |
| 8 | Թիոպենտալ n01af03, n05ca19 /Թիոպենտալ (թիոպենտալ նատրիում), thiopental (thiopental sodium)/ | սրվակ | 1600 | 3,744,000.00 | | | | | | | | | | 2,666,666.67 | 533,333.33 | 3,200,000.00 | «Նատալի Ֆարմ» ՍՊԸ |
| 9 | Բուպիվակային n01bb01 /Բուպիվակային (բուպիվակայինի հիդրոքլորիդ),bupivacaine (bupivacaine hydrochloride)/ | սրվակ | 2000 | 2,002,000.00 | 1,610,000.00 | 322,000.00 | 1,932,000.00 | | | | | | | | | | «Արֆարմացիա» ՍՊԸ |
| 10 | Բուպիվակային n01bb01 /Բուպիվակային (բուպիվակայինի հիդրոքլորիդ) bupivacaine (bupivacaine hydrochloride)/ | սրվակ | 3000 | 4,584,000.00 | 3,490,000.00 | 698,000.00 | 4,188,000.00 | | | | | | | | | | «Արֆարմացիա» ՍՊԸ |
| 11 | Մետամիզոլ (մետամիզոլի նատրիում) N02BB02 /Մետամիզոլ (մետամիզոլ նատրիում),metamizole (metamizole sodium)/ | սրվակ | 50130 | 1,684,368.00 | 1,295,025.00 | 259,005.00 | 1,554,030.00 | | | | | | | | | | «Արֆարմացիա» ՍՊԸ |
| 12 | Ասկորբինաթթու g01ad03, s01xa15, a11ga01 /Ասկորբինաթթու, ascorbic acid/ | սրվակ | 45000 | 2,419,200.00 | 1,871,250.00 | 374,250.00 | 2,245,500.00 | | | | | | | | | | «Արֆարմացիա» ՍՊԸ |
| 13 | Էթանոլ d08ax08, v03ab16, v03az01 /Էթանոլ, ethanol/ | լիտր | 3000 | 4,050,000.00 | | | | | | | | | | | | | Առաջարկի բացակայություն |
| 14 | Հակահիստամինային միջոցներ՝ պարբերական կիրառման համար | սրվակ | 5000 | 1,604,000.00 | 1,129,166.67 | 225,833.33 | 1,355,000.00 | 5,852,166.67 | 1,170,433.33 | 7,022,600.00 | | | | 1,187,500.00 | 237,500.00 | 1,425,000.00 | «Արֆարմացիա» ՍՊԸ |
| 15 | Քլորոպիրամին (քլորոպիրամինի հիդրոքլորիդ) chloropyramine (chloropyramine hydrochloride) | դեղահատ | 20000 | 1,256,000.00 | 950,000.00 | 190,000.00 | 1,140,000.00 | 983,058.33 | 196,611.67 | 1,179,670.00 | | | | | | | «Արֆարմացիա» ՍՊԸ |

«Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ի կողմից 15-րդ չափաբաժնի մասով գնային առաջարկը գնահատելիս հանձնաժողովը հիմք է ընդունել տառերով արտահայտված գումարները

Գնահատող(ԳԱՊ) Վ. Գասպարյան

Գնահատող Ս. Նիկոլյան

Գնահատող Հ. Ավետիսյան

Գնահատող Ն. Հարությունյան

Գնահատող Կ. Բրուտյան

Գնումները Ա. Մաղաքյան

25.10.2017թ.